ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Միքայել Փաշայանի՝ Ղազախստանի Հանրապետություն կատարած այցի արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Միքայել Փաշայան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Քաղաք Աստանա, Ղազախստանի Հանրապետություն, 2018 թվականի հունիսի 14-16-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ դաշնային մաքսային ծառայության ղեկավար Վ.Ի. Բուլավին:

5. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ և Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 27-րդ նստաշրջաններին մասնակցելու նպատակով:

6. Քննարկված թեմաները՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 10 որոշումներ, Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 27-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 26 որոշումներ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Միքայել Փաշայանը երկկողմ հանդիպումներ է ունեցել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության, Ղրղզստանի Հանրապետության մաքսային ծառայությունների ղեկավարների հետ, քննարկվել են երկկողմ հետաքրքրություն ներկայացնող մի շարք հարցեր, այդ թվում տարբեր մեխանիզմներ՝ ԵԱՏՄ շրջանակներում տեղափոխվող ապրանքների (մասնավորապես ՀՀ-ից արտահանվող) տեղափոխման պայմանների դյուրացման և ֆիզիկական զննման կրճատման ուղղությամբ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 67-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 10 որոշումներ, մասնավորապես մաքսային հարցերում գործող երկկողմ միջազգային պայմանագրերի վերաբերյալ տեղեկատվության փոխանակման, ավտոտրանսպորտային անցակետերում տեղակայված սահմանային մաքսակետերի մինիմալ պահանջների, անմաքս առևտրի խանութների գործունեության փորձի փոխանակման վերաբերյալ և այլն:

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 27-րդ նիստի ընթացքում ընդունվել են թվով 26 որոշումներ մասնավորապես պայմանականորեն բաց թողնված ապրանքների նկատմամբ արգելքների և սահմանափակումների հսկողության հաստատման մասով ԵԱՏՄ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավակիրակման փորձի վերաբերյալ, մաքսային տարանցում ընթացակարգով ձևակերպված ապրանքների բացթողնման և այդ ընթացակարգի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության հիմունքներով եզրափակմանը վերաբերող մաքսային գործողությունների իրականացման վերաբերյալ և այլն:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝

Որոշում է կայացվել ԱՊՀ մասնակից պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի 68-րդ նիստն անցկացնել ս.թ. հոկտեմբերին Տաջիկստանի Հանրապետությունում, իսկ Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 28-րդ նիստը՝ ս.թ. սեպտեմբերին Բելառուսի Հանրապետությունում:

10. Գործուղվողը՝

Միքայել Փաշայան

11. Ստորագրությունը, ամսաթիվը՝

22.06.2018թ.